ԿԻԼԻԿՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԵՒ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ ՆԿԱՐԱԶԱՐԴԱԾ ԽՈՐԱՆՆԵՐԸ

ՆԱԻՐԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մեծ Հայքը և Կիլիկյան հայկական թագավորությունը շարունակական սերտ մշակութային հարաբերությունների մեջ են գտնվել: Հայաստանից բազմաթիվ արվեստի և գիտության գործիչներ կրթվել են Կիլիկիայում, Կիլիկիայից էլ շատ արվեստագետներ կապ են պահպանել պատմական հայրենիքի հետ: Այդ իսկ պատճառով այդ դպրոցների գրատներում ստեղծված ձեռագրերում հանդիպում ենք ընդհանուր տարրերի: Կիլիկյան դպրոցի ազդեցությունը զգացվում է խորանների, տիտղոսաթերթերի, տոնական շարքի, լուսանցազարդերի, այլ գեղարվեստական տարրերի մեջ: Հոդվածը նվիրված է Գլաձորի համալսարանի XIV դ. առաջին կեսի նշանավոր ներկայացուցիչ՝ ծաղկող, մանրանկարիչ, գրիչ Թորոս Տարոնացու արվեստին, նրա նկարազարդած ձեռագրերում կիլիկյան մանրանկարչական ավանդույթի առկայությանը: Օգտագործելով տարբեր դպրոցների պատկերազարդման ավանդույթները՝ նկարիչը կարողացել է ստեղծել իր սեփական հարուստ, եզակի աշխարհը:

Առանցքային բառեր. *Թորոս Տարոնացի, Կիլիկիա, մանրանկարչություն, տիտղոսաթերթ, լուսանցազարդ, տոնական շարք, ավետարանիչ:*

Ինչպես հայտնի է, Բուն Հայաստանը և Կիլիկիայի հայկական թագավորությունը սերտ շարունակական մշակութային հարաբերությունների մեջ են գտնվել: Հայաստանից բազմաթիվ արվեստի և գիտության գործիչներ կրթվել են Կիլիկիայում, Կիլիկիայից շատ արվեստագետներ կապ են պահպանել հեռավոր հայրենիքի հետ: Կիլիկիայում սովորել և աշխատել են Մխիթար Գոշը, Կիրակոս

Գանձակեցին, Վարդան Արևելցին, Ֆրիկը, Ստեփանոս Օրբելյանը, Մոմիկը: Կիլիկիայից էլ Հայաստան են եկել Պողոսը, Վարդանը[1]:

Մեծ Հայքի վարպետները ասես հայտնաբերում են կիլիկյան մանրանկարչական ավանդույթը և վերադարձին հետները բերում նկարազարդ ձեռագրերի նմուշներ, որոնք էլ ազդեցություն են ունենում XIII-XV դ.դ. հայաստանյան գեղարվեստական ավանդույթի վրա[2]:

Հարկ է նշել, որ գեղարվեստական շատ տարրեր Կիլիկիա են հասել Մեծ Հայքից: Հայաստանյան ավանդույթը կիլիկյան վարպետները զարգացրել են, հարստացրել, ու հետո այն կատարելագործված վիճակում վերադարձել է հետ[3]: Մեծ Հայքից կիլիկյան մանրանկարչություն են ներթափանցել բուսակերպ, թռչնակերպ և կենդանակերպ մոտիվներ, իրական և առասպելական կենդանիների պատկերներ, ինչպես նաև լուսանցազարդեր, որոնք նշում են գրքերի սկիզբը և դրանց համարները[4]:

Այս և այլ դեկորատիվ տարրերի հանդիպում ենք մինչկիլիկյան ձեռագրերում: Բուն Հայաստանի և հայկական Կիլիկիայի մանրանկարչական դպրոցների փոխկապակցության և փոխազդեցության շնորհիվ այդ դպրոցների գրչատներում ստեղծված ձեռագրերում հանդիպում ենք ընդհանուր տարրերի: Մշակութային այդ կապը շոշափելի է հատկապես Գլաձորի դպրոցում: Ըստ այդմ՝ հոդվածը նվիրված է Գլաձորի համալսարանի XIV դ. առաջին կեսի նշանավոր ներկայացուցիչ՝ ծաղկող, մանրանկարիչ, գրիչ Թորոս Տարոնացու

---

1 **Ա. Ավետիսյան,** *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը,* Երևան, 1971, էջ 31, 32:

2 Հ. Հակոբյան, Է. Կորխմազյան, «Բուն Հայաստանի մանրանկարչությունը (XIII-XIV դ.դ.), Սյունիք», **Լ. Զաքարյան, Ի. Դրամփյան, Է. Կորխմազյան, Հ. Հակոբյան** (խմբ.), *Հայկական մանրանկարչություն*, Երևան , 2014, էջ 44:

3 «Общий же контур и растительный орнамент, служащие основой для размещения перечисленных мотивов, перешли, вернее, вернулись в коренную Армению из Киликии, поскольку первоначальная форма была «вывезена» в своё время в Киликию из коренной Армении», **Л. Дурново,** *Очерки изобразительного искусства средневековой Армении,* Москва, 1979, с. 248.

4 **S. Manoukian,** «L'art du livre en Cilicie et les traditions byzantines», *L'Arménie et Byzance, Histoire et culture,* Publications de la Sorbonne, Paris, 1996, p. 131.

արվեստին, նրա նկարազարդած ձեռագրերում արտացոլված կիլիկյան մանրանկարչական ավանդույթի բազմաթիվ տարրերին: Հոդվածի հիմնական խնդիրն է նրա մանրանկարներում այդ տարրերի վերհանումն ու վերլուծությունը: Բացի այդ՝ նպատակ ունենք նաև ներկայացնել Թորոս Տարոնացու արվեստի յուրահատկությունները, ոճական և կատարողական հմտությունները, ինչը մեզ թույլ է տալիս պատկերացում կազմել և հասկանալ XIV դ սկզբի Գլաձորի դպրոցի որոշակի առանձնահատկությունները: Հետազոտությունը կատարել ենք արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդներով: Որպես ուսումնասիրության առարկա է ընտրված Եսայի Նչեցու Ավետարանը (1307 թ., Վենետիկի Մխիթարյան Միաբանություն, այսուհետ՝ Վնտկ., Հմր 1917):

Հոդվածում նախ ներկայացված են կիլիկյան ձեռագրերի առանձնահատկությունները և մինչկիլիկյան ձեռագրերի միջև եղած փոխազդեցությունները, այնուհետև այդ ավանդույթների տարրերը քննված են Թորոս Տարոնացու արվեստում:

Կիլիկիայի հայկական թագավորության և Բուն Հայաստանի պատկերազարդման ավանդույթների փոխազդեցությունը

Կիլիկյան ձեռագրերի խորաններում XII դ. վերջից սկսած զարգանում և ընդհանուր տարածում է ստանում արաբեսկը[5]: Գորգատիպ նախշազարդերով հարդարված գլխազարդի մեջ ամփոփված կամարաշարքը երբեմն նմանվում է զիգզագաձև, հովհարաձև սաղարթների, որոնց ներսում ներկայացված է կենդանական կամ բուսական «աշխարհը»: Խոյակները և խարիսխները կենդանիների դիմակների են նմանվում, իսկ ստորին մասում, սյուների կողքին, պատկերվում էին երևակայական ծառեր: Մեկ

[5] **S. Der Nersessian**, *Manuscrits arméniens illustrés des XII, XIII et XIV siècles de la bibliothèque des pères Mekhitharistes de Venise,* Paris, 1937, p. 118.

տարը, որ բխում է կիլիկյան ձեռագրերից և նորույթ է հայ մանրանկարչական ավանդույթում, դիմանկարը կիսաշրջանի մեջ պատկերելն է: Որպես օրինակ կարող ենք բերել Եվսեբիոսի Թղթի երկու էջերի գլխազարդի տիմպանում Եվսեբիոսի և Կարպիանոսի դիմանկարները (նկ.1), մեդալյոնների մեջ պատկերված Հիսուսի, Տիրամոր, Հովհաննես Մկրտչի դիմանկարները (Թորոս Ռոսլին, 1256 թ. Ձեյթունի Ավետարան, ՄՄ Հմր 10450): Միջնադարում դիմանկարները մեդալյոնների մեջ պատկերելը բխում է անտիկ հունական գրքերի ավանդույթից[6], կամ էլ վաղ քրիստոնեական նմուշների ձևափոխման հետևանք է[7]: Եվսեբիոսի Թղթի երկու էջերը, խորանների ութ էջերը, ինչպես նաև ընծայական էջը, որ հաջորդում էր խորաններին, ամփոփվում են ուղղանկյուն գլխազարդի մեջ[8]:

Ընծայական էջը խորանի պես նկարազարդելը զարգացել է Կիլիկիայում, ինչը նորություն էր XIII դարում[9]: Այն ներկայացնում էր բուսական և երկրաչափական զարդամոտիվներով հարդարված գլխազարդ, ոսկե խորքի վրա երկաթագրով գրված ընծայագիր (նկ.2): Խորանները զարդարված են իրական և երևակայական բույսերի, թռչունների և կենդանիների պատկերներով, որոնք հարստացնում և արտակարգ կենդանություն են հաղորդում այդ էջերին: Կիլիկյան ձեռագրերում առկա որոշ հորինվածքների նախադրյալները գտնում ենք Մեծ Հայքի մանրանկարչական ավանդույթում արդեն X-XII դդ.-ից: Օրինակ, զիգզագաձև, հովհարաձև սաղարթների հանդիպում ենք 989 թ. Էջմիածնի Ավետարանի «Հիսուսը Առաքյալների հետ» տեսարանում (ՄՄ Հմր 2374, էջ 6ա), X-XI դդ. Տրապիզոնի Ավետարանում (Վնտկ. Հմր

---

6 **В. Казарян, С. Манукян,** «Книга киликийской Армении», *Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков,*Том 1, Москва, 1991, с. 94, 103.

7 **Manoukian,** «L'art du livre en Cilicie...», p. 132.

8 Նույն տեղում:

9 **Казарян, Манукян,** Армянская рукописная... с. 90.

1400/108), XI դ. Գագիկ թագավորի (Կարսի) (Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, այսուհետ՝ Երսդ. Հմր 2556) և XII դ. Ավետարաններում (ՄՄ Հմր 2952): Սյուների կողքին երևակայական ծառերը պատկերված են X դ. Ավետարանում (ՄՄ Հմր 9430), 1053 թ. (ՄՄ Հմր 3793) և 1060 թ. «Բեգյունցի» (ՄՄ Հմր 10099) Ավետարանում[10]:

Լուսանցանկարները բազմապիսի են և յուրօրինակ: Հաճախ են հանդիպում խաչերը՝ որպես խաչելության խորհրդանիշ, ձկները՝ Քրիստոսի ու հացի բազմացման ավետարանական պատմության խորհրդանիշ, աքաղաղները՝ Պետրոսի ուրացման, և տաճարիկները՝ Երուսաղեմի տաճարի խորհրդանիշներ: Լուսանցքներում պատկերված են նաև հուշկապարիկներ, սիրամարգեր, կանթեղներ, բազմապիսի բուսական մոտիվներ, որոնցում նշված են ընթերցվածների սկիզբը, և որտեղ գրվում էր գրքի համարը[11]: Կիլիկյան ձեռագրերի լուսանցազարդերի և լուսանցանկարների նախատիպերը նույնպես ձևավորվել են մինչկիլիկյան Մեծ Հայքի ձեռագրերում: Դրանք ներկայացված են 909 թ.Կարմիր Ավետարանում (ՄՄ Հմր 6202), Էջմիածնի Ավետարանում, X-XI դ.դ. Վեհափառի Ավետարանում (ՄՄ Հմր 10780), 1185-1188 թթ. Ճառընտիրում (ՄՄ Հմր 3777):

Ավետարանիչները պատկերված են իրենց Ավետարաններից առաջ: Կերպարները հիշեցնում են անտիկ փիլիսոփաներին, որոնց զուգահեռները կարող ենք հանդիպել հռոմեական որմնանկարներում[12], կամ ներկայացված են գրիչների տեսքով՝ գրելու ընթացքում: Ավետարանիչների դիմանկարները համապատասխան Ավետարանից առաջ տեղադրելու ավանդույթը նույնպես ձևավորվել է մինչկիլիկյան ձեռագրերում: Առաջին անգամ դրան

---

10 **Т. Измайлова,** *Армянская миниатюра XI века,* Москва, 1979, с. 122.

11 **Казарян, Манукян,** *Армянская рукописная...,* с. 109.

12 T. Mathews, «The Art of the Armenian Manuscript», **T. Mathews, R. Wieck,** *Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts,* The Pierpont Morgan Library, New York, 1994, p. 50.

ականատես ենք 966 թ. Թարգմանչաց (Բալթիմոր, Ուոլթերս պատկերասրահ, Հմր 577) և Վեհափառի Ավետարաններում[13]: Ավետարանիչների կերպարներին անտիկ փիլիսոփաների տեսքով պատկերելը հայ միջնադարյան արվեստում հայտնի է դեռևս 862 թ. Մլքեի Ավետարանից (Վնտկ.1144/86)[14], իսկ նրանց դիմանկարները գրիչների տեսքով՝ գրելիս, հայտնի է XI դ. երկրորդ կեսից. 1053 թ., 1060 թ. «Բեգյունցի», Մողնու (ՄՄ Հմր 7736) Ավետարաններ: Հայկական մինչկիլիկյան ձեռագրարվեստում ձևավորված ավետարանիչներին ներկայացնող ավանդույթը կիրառել են նաև կիլիկյան մանրանկարիչները:

Կիլիկյան ձեռագրերում տիտղոսաթերթերի էջի ձախ անկյունում գլխատառն է՝ կազմված Ավետարանչի խորհրդանիշով: Էջի աջ անկյունում ծաղկազարդ լուսանցազարդը զբաղեցնում է էջը կիսով չափ, կամ ամբողջ երկարությամբ՝ վերևում ամփոփվելով խաչով: Երկրաչափական, բուսական, կենդանակերպ և թռչնակերպ զարդանախշերից կազմված ուղղանկյուն գլխազարդի բացվածքի (տիմպան) ներքո ավելի փոքր գրով գրվում էր Ավետարանի վերնագիրը՝ ոսկով կամ կարմիր թանաքով[15]: Սկզբնատողը՝ մարդակերպ, կենդանակերպ, թռչնակերպ, ծաղկազարդ տառերից էր, կամ արված էր հյուսածո և խճանկարային եղանակով և եզերված էր ոսկով[16]:

Հարկ է նշել, որ XI–XII դդ. Սեբաստիայի Ավետարանի (1066 թ., նկարազարդվել է XII դ., ՄՄ Հմր 311) Մարկոսի և Ղուկասի Ավետարանների տիտղոսաթերթերի (էջ 83ա, 135ա) ձևավորումը փոքր ինչ այլ է. էջը վերևում ամփոփվում է գլխազարդով, իսկ սկզբնատողը գրված է երկաթագրով ոսկյա խորքին կարմիր տո-

---

13 **Հ. Հակոբյան, Վ. Ղազարյան,** *Հայկական մանրանկարչություն,* Երևան, 2019, էջ 46:

14 **Измайлова,** *Армянская миниатюра…*, с. 117,

15 **Казарян, Манукян,** *Армянская рукописная…*, с. 104; **S. Manukyan,** «Le rôle de la rubrication dans le système décoratif des évangiles arméniennes», *Revue des études arméniennes 38 (2018-2019),* p. 89.

16 Նույնի, «L'art du livre en Cilicie…», p. 130.

ղերի ներքո (նկ. 3)։ Հետագայում, ձևավորման այս տեսակը զարգացել է և այսուհետ կիրառվել Ընծայական էջերի համար (տե՛ս նկ. 2)։

Կիլիկյան տիտղոսաթերթերում պատկերված տարրերի հանդիպում ենք բուն Հայաստանում ընդօրինակված ձեռագրերում արդեն XI դ. երկրորդ կեսից սկսած. ավետարանչի խորհրդանիշով կազմված գլխատառ, խաչով պսակված լուսանցազարդ, գլխազարդի լյունետում գրված վերնագիր (1053 թ., 1069 թ., Մողնու Ավետարաններ)։ Տիտղոսաթերթերի տարածված ձևը թե՛ կիլիկյան ձեռագրերում, թե՛ Մեծ Հայքի մանրանկարչության մեջ կանոնական տեսք է ստացել X-XI դդ. Տրապիզոնի Ավետարանում[17]։

Կիլիկիայում ընդօրինակված ձեռագրերում տոնական շարքի՝ էջով մեկ արված տեսարանները բաշխվում էին ըստ Ավետարանների։ Մանրանկարը ծածկում էր էջի միայն մի կողմը[18]։ Բազում են բնագրային՝ տեքստի մեջ ներմուծված մանրանկարները։ Բնագրային մանրանկարներով է հարուստ XIII դ. «Ութ մանրանկարիչների Ավետարանը» (ՄՄ Հմր 7651)։ Մանրանկարների խորքը ոսկյա էր, իսկ հիմնական գույներն էին կարմիրը, կապույտը և կանաչը[19]։ Մինչկիլիկյան շրջանի հայկական ձեռագրերում էջով մեկ արված մանրանկարները տեղադրվում էին բնագրից առաջ, առանձին տետրի մեջ։ Էջի միայն մի կողմը նկարազարդելու սովորույթը հայ մանրանկարչության մեջ առաջին անգամ հանդիպում ենք XI դ. Մողնու Ավետարանում[20]։ Բնագրային մանրանկարների առաջին օրինակները հայ արվեստում ներկայացված են X-XI դդ. Վեհափառի Ավետարանում և XI դ. Գագիկ թագավորի Ավետարանում[21], և շարունակում են տվյալ Ավետարանների նման ձեռագրերի պատկերազարդման և բյու-

---

17 **Հակոբյան, Ղազարյան,** *Հայկական...*, էջ 46։

18 **Казарян, Манукян,** *Армянская рукописная...*, с. 90.

19 **Հակոբյան, Ղազարյան,** *Հայկական...*, էջ 99։

20 **L. Dournovo,** (préface **S. Der Nersessian**), *Miniatures arméniennes,* Editions Cercle d'art, Paris 1960, p. 18.

21 **Der Nersessian**, *Manuscrits arméniens...*, p. 14; **Измайлова,** *Армянская миниатюра...*, с. 201.

զանդական գրքարվեստի ավանդույթները[22]:

Կիլիկիայում մեծ ուշադրություն է դարձվել զարդամոտիվներին. ծաղկազարդեր, գլխազարդեր, ծաղկագիր գլխատառեր: XII դ. երկրորդ կեսից սկսած՝ տառերը առնվել են ոսկե ուրվագծի մեջ: Սեյրանուշ Մանուկյանը, որ մանրակրկիտ ուսումնասիրել է կիլիկյան ձեռագրերը, գրում է. «Նուրբ և կոկած մագաղաթը, գեղարվեստորեն ձևավորված ձեռագիրը, ոսկու առատ օգտագործումը, գունապնակի ճիշտ և բազմազան ընտրանին, տեքստի և պատկերների միջև տրամաբանական կապը, ամբողջ էջով և տեքստի մեջ պատկերված մանրանկարների բազմազանությունը՝ այս ամենը համապատասխանում էր այն ձգտումներին, միտումներին և նպատակներին, որոնք հայտնվել էին կիլիկյան արվեստում XII դ. սկզբին և որոնք զարգացան մինչև XIV դ.»[23]: Անշուշտ, հայ ձեռագրարվեստի հուշարձաններից մեզ հասած ժառանգությունը թույլ է տալիս պնդել, որ կիլիկյան ձեռագրերը ամենակատարելագործվածներն էին թե՛ գեղարվեստական ձևավորման ներդաշնակությամբ, թե՛ գունապնակի համահունչ ընտրանիով, թե՛ ֆիգուրների համամասնությունների համաչափությամբ և թե՛ բնանկարի ու ճարտարապետական ձևերի ճշգրիտ փոխանցմամբ: Ինչպես արդեն ասվեց, կիլիկյան գրքարվեստում առկա գեղարվեստական բազում տարրեր այնտեղ են հասել բուն Հայաստանից, որտեղ դրանք վերջնական ձևավորում են ստացել դեռևս X-XI դդ.: Բնականաբար, այդ դարերում ձևավորումը այնքան բազմազան և անթերի չէր, ինչպիսին դարձավ հետագայում: Իսկ կիլիկյան վարպետները այն զարգացրին և հասցրեցին կատարելության:

---

22 **Казарян, Манукян,** *Армянская рукописная…*, с. 50; **Հակոբյան, Ղազարյան,** *Հայկական…, էջ 44:*

23 **Manoukian,** «L'art du livre en Cilicie…», p. 130.

Կիլիկյան ավանդույթները Թորոս Տարոնացու արվեստում

Լիդիա Դուռնովոն գրում է, որ իր գործունեության սկզբում Թորոս Տարոնացին եղել է Կիլիկիայում և այնտեղից է բերել շքեղ զարդարված գրքի նկատմամբ սերը[24]: Լինելով Գլաձորի դպրոցի ներկայացուցիչ՝ Թորոս Տարոնացին ողջ ստեղծագործական ուղու ընթացքում իր ծաղկած ձեռագրերում արտացոլել է կիլիկյան մանրանկարչական ավանդույթի որոշակի գծեր:

Տարոնացու արվեստում սկզբնական շրջանում կիլիկյան ձեռագրերի ազդեցությունը արտահայտված է հատկապես խորանների և տիտղոսաթերթերի ճոխ և բարդ գեղարվեստական ձևավորումներում:

Խորան նշանակում է «բեմ, տաճար, վրան» և իր իմաստով կապվում է Աստվածաշնչում Մովսեսի կառուցած սրբարանի հետ (Ելք, ԻԶ)[25]: Միայն հայ միջնադարյան մշակույթում է, որ աստվածաբանները զբաղվել են խորանների խորհրդաբանական իմաստի մեկնությամբ: «Նրանք խրախուսում էին դիտողին ընդունել խորանների հարուստ հարդարանքը որպես վերացական միջոց, որ օգնում է բացահայտել անհասանելի և անտեսանելի Աստծո փրկագործության առեղծվածի կոնկրետ և տեսանելի իրագործումը երկրի վրա՝ Եկեղեցու տեսքով»[26]: Հայկական արվեստում խորանները նկարազարդվել են յուրահատուկ ճոխությամբ, «անսովոր արևելյան շքեղությամբ»[27]: Խորանների հորինվածքն արտահայտում է ճարտարապետական ձևերը՝ մանրանկարչության մեջ: Նկարիչներն ու ճարտարապետները վեր-

---

24 **Дурново,** *Очерки…*, с. 270.

25 **Է. Կորխմազյան,** *Բարձր Հայքի մանրանկարչությունը ԺԱ-ԺԴ դդ.*, Երևան, 2015, էջ 24:

26 «These theologians encourage the viewer to use the rich decoration of the tables as an abstract tool for meditating on the unfolding of the mystery of redemption from its source in God, who is inaccessible and invisible, to its realization in the concrete and visible Church on earth», **Mathews, Wieck,** *Treasures…*, p. 43, 46.

27 Նույն տեղում, էջ 43.

արտադրում էին մոդելներ, որոնք, ըստ իրենց, աստվածային ներշնչանքի աղբյուր էին: Այս մոդելների սրբության գաղափարը արդարացված էր Սուրբ Գրքով[28]: Գլխազարդերի մեջ ամփոփված կամարները «...ներկայացնում են տաս երկինքները, այսինքն՝ այն տաս սերունդները, որոնք մեզ բաժանում են Աստծուց՝ աշխարհի ստեղծումից ի վեր»[29]: Մանրանկարչության արվեստում այդ կամարաշարքը հանդիսանում էր որպես մուտք դեպի Սուրբ Գիրք: Իսկ գլխազարդերի կենդանակերպ մոտիվներում արտահայտվել են հին հավատքներ, «տոտեմների հուշեր, բարու և չարի, տարբեր բնական երևույթների այլաբանություններ»[30]: Խորանները Թորոս Տարոնացու արվեստում, նույնիսկ իր աշխատանքային գործունեության սկզբում, ամենաճոխ պատկերազարդված էջերն են: Նրանք հարուստ են բարդ բուսական, կենդանական հարդարանքով, երկրաչափական ձևերով, կիսախորաններով, օժտված են գորգատիպ նախշազարդերով, հարստացված արաբեսկներով և ծաղկազարդ ձևավորումներով: Մարդակերպ կամ կենդանակերպ դիմակները հարդարում են խոյակները և խարիսխները, ինչը կիլիկյան ավանդույթ է: Վարպետի նկարազարդած ձեռագրերում Եվսեբիոսի Թղթի երկու էջերը, խորանների ութ էջերը, ինչպես նաև Ընծայական էջի ձևավորումը գալիս են Կիլիկիայից: Ինչպես նշեցինք, Կիլիկիայում Եվսեբիոսի Թղթի երկու էջերում պատկերվում էին Եվսեբիոսի և Կարպիանոսի դիմանկարները՝ առնված կիսաշրջանների մեջ: Կիլիկյան այս ավանդույթը արտահայտված է նաև Թորոս Տարոնացու հովհարաձև հարդարանք: Գլխազարդի համակենտրոն կամարների ներքո ամփոփված են եռաթերթիկներ, վարդյակներ, բուսական, կենդանական մոտիվներ, սյուների հիմքի կողքին՝ երևակայական ծառեր: Տարոնացու նկարազարդած

---

28 **N. Garibian de Vartavan,** «Le terme sacré '*xoran*' et ses rapports avec l'évolution décorative des Tables de canons», *Ani, capitale de l'Arménie en l'an mil*, Catalogue de l'exposition au Pavillon des Art, Paris 2001, p. 221-233.

29 **A. Vernay-Nouri,** «Iconographie de l'Evangile», *Livres d'Arménie,* Bibliothèque national de France, 2007, p. 74.

30 **Զաքարյան, Դրամփյան, Հակոբյան, Կորխմազյան,** *Հայկական...*, էջ 43-44:

խորաններում հանդիպում ենք իրար հոշոտող առյուծների՝ առյուծակոիվ, հերալդիկ ձևով առյուծների: Նման դիրքով են նրանք պատկերված Հեթում Բ-ի Ճաշոցի Ավետման տոնի ընթերցվածի տիտղոսաթերթում (1286 թ., ՄՄ Հմր 979, էջ 293ա), թեպետ այդ ձեռագրում առյուծների գույնը, դիրքը և ձևը տարբերվում են Թորոս Տարոնացու պատկերած օրինակից: Եվս մեկ կիլիկյան ձեռագիր, որը, մեր կարծիքով, հիմք է ծառայել Տարոնացու համար՝ ստորև նկարագրված պատկերների համար: Դա XIII դ. 80-ականներին ծաղկած Ավետարանն է (ՄՄ Հմր 9422): Թորոս Տարոնացու որոշ խորաններում (1318 թ. Եսայի Նչեցու Աստվածաշունչ, ՄՄ Հմր 206, էջ 438ա; 1323 թ. Ավետարան, ՄՄ Հմր 6289, էջ 8ա) ուղղանկյուն կիսախորանը առնված է նախշազարդ կապույտ շրջանակի մեջ, որը, կենտրոնում խաչվելով, կազմում է եռահարկ բազմաձև լյունետ: Կիսախորանի ներսում պատկերված են հերալդիկ ձևով երկու առյուծներ: Պատկերազարդման այս տեսակը հանդիպում ենք նաև կիլիկյան վերոհիշյալ ձեռագրում (էջ 1բ, 2ա): Նմանություն կա նաև գունապնակի ընտրանու մեջ: Վարպետի ծաղկած խորաններում (1307-1331 թթ. Ավետարան, Հարթֆորդի հոգևոր ճեմարանի գրադարան, MS 3, ԱՄՆ; 1318 թ. Եսայի Նչեցու Աստվածաշունչ, 1323 թ. Ավետարան) գլխազարդի հիմքում գտնվող քիվի վրա հանդիպում ենք նստած մեկ կամ երկու կապիկ-մայմունների՝ մի ձեռքում կանթեղ, մյուսով՝ միրգ ուտելիս: Նման օրինակ տեսնում ենք 1336 թ. Կիլիկիայում Սարգիս Պիծակի նկարազարդած Արքունական Ավետարանում (ՄՄ Հմր 5786, էջ 9բ, 10ա): Թեպետ կիլիկյան ձեռագրում կենդանին կինոկեֆալ է՝ գլուխը ավելի նմանվում է շան գլխին, սակայն պատկերման ձևը նույնն է: Կիլիկյան այդ ձեռագիրը գրվել է ավելի ուշ, քան Թորոս Տարոնացու վերը նշված ձեռագրերը, սակայն նմանատիպ էջեր կիլիկյան մանրանկարչության մեջ շատ են հանդիպում:

1307 թ. Ավետարանի (Վնտկ. Հմր 1917, էջ 12ա) Ընծայական էջը նկարազարդված է խորանի պես. էջի վերևում բուսական մոտիվներով հարդարված ուղղանկյուն գլխազարդը ավարտվում է

խաչով, որի շուրջը դեմ դիմաց թառած են երկու թռչուն: Ոսկե խորքի վրա տեքստը գրված է կապույտ երկաթագրով, կարմիր տողերի ներքո: Ինչպես արդեն նշվել է, Ընծայական էջի նման հարդարանքը զարգացել է Կիլիկիայում XIII դ.: Այն ներկայացված է 1251 թ. Ավետարանում (ՄՄ Հմր 3033), 1253 թ. Ավետարանում (Freer Gallery of Art Հմր 1963): Պատկերազարդման այս տիպը բազմիցս հանդիպում է նաև Թորոս Ռոսլինի արվեստում. 1256 թ. Ձեյթունի, 1262 թ. (Walters Art Gallery, W 539), 1265 թ. (Երսղ. Հմր 1956), 1267-1268 թթ. Մալաթիայի (ՄՄ Հմր l0675) Ավետարաններ: Մեր ուսումնասիրած ձեռագրում Ընծայականը, կիլիկյան ձեռագրերի նման, հաջորդում է անմիջապես խորաններին:

Լուսանցապատկերները և լուսանցազարդերը Թորոս Տարոնացու արվեստում առատ են և ունեն տարբեր ձևավորումներ: Դրանք փոքր հորինվածք ունեցող պատկերներ են, որոնք տեղադրված են լուսանցքներում, որպես ավետարանական բնագրի ընթերցվածների սկիզբը նշող սկզբնազարդեր[31]:

Լուսանցապատկերներում հանդիպում ենք խաչերի և տաճարիկների, թագադիր հուշկապարիկների և լուսապսակով սիրամարգերի, սրինգ նվագող հովիվների, ինչպես նաև փոքր չափի մանրանկարների՝ առնված օվալաձև ոսկե ուրվագծի մեջ, որոնք լուսաբանում են «սյուժեի կուլմինացիոն պահը կամ դրա խորհրդանշանական իմաստավորումը»[32]: Լուսանցապատկերներով է հարուստ հատկապես 1318 թ. Աստվածաշունչը: Էմմա Կորխմազյանը և Հրավարդ Հակոբյանը Աստվածաշնչի մասին գրում են, որ «նման պատկերազարդումներ

---

[31] **Manoukian,** «L'art du livre en Cilicie...», p. 133; **նույնի,** *Տեքստաբաժանումները (ռուբրիկացիան) հայկական ձեռագիր ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում,* սեղմագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Երևան, 2008, էջ 10, 11, 12, 13, 14; **նույնի,** «Le rôle de la rubrication...», p. 86, 88, 89, 90:

[32] **Զաքարյան, Դրամփյան, Հակոբյան, Կորխմազյան,** *Հայկական...,* էջ 45:

զուգահեռներ չունեն հայկական գեղանկարչության մեջ և բազմաթիվ համանմանություններ ունեն XII-XIII դ.դ. լատինական պատկերազարդ Աստվածաշնչերում»[33] (նկ.4):

Լուսանցազարդերի բուսակերպ հարդարանքում գրված է ընթերցվածի համարը: Ծաղկողը իր ձեռագրերում շարունակել է միայն հայկական մինչկիլիկյան և կիլիկյան ձեռագրարվեստին բնորոշ ավանդույթը, որը համատարած է դառնում XII դ. և «բացակայում է հունական և լատինական միջնադարյան ձեռագրերում»[34]:

Թորոս Տարոնացու արվեստում ավետարանիչները պատկերված են համապատասխան Ավետարանից առաջ և իրենց ավետարանների տիտղոսաթերթերի հետ միասին կազմում են միասնական էջաբացվածքներ, այսպիսով շարունակելով մինչկիլիկյան ձեռագրերում ձևավորված և հետագայում զարգացում ստացած պատկերազարդման ավանդույթը[35]: Կերպարները հիշեցնում են անտիկ փիլիսոփաներին, հայացքները ուղղված դեպի հեռուն՝ խորհելիս, կամ գրիչների տեսքով են՝ գրելիս: Ներկայացված են աշխատելիս, ճարտարապետական կամ բնանկարային միջավայրում, շրջապատված են գրչության համար անհրաժեշտ պիտույքներով, ինչը համապատասխանում էր հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ ընդունված ձևերին[36]:

Ավետարանիչները պատկերված են ըստ կանոնական պատկերագրության՝ Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը նստած, Հովհաննեսը՝ կանգնած Պրոքորոնի հետ[37]:

---

33 Նույն տեղում:

34 **Մանուկյան**, *Տեքստաբաժանումները...*, էջ 23, 33:

35 **Казарян, Манукян,** *Армянская рукописная...*, с. 47, 50, 53; **Հակոբյան, Ղազարյան,** *Հայկական...*, էջ 44:

36 **Վ.Ղազարյան,** «Ավետարանիչների պատկերագրությունը 14-րդ դարի կիլիկյան մանրանկարչության մեջ», *Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում,* զեկուցումների ժողովածու, հ. IV, Հայ միջնադարյան մանրանկարչություն, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, էջ 82:

37 **Հակոբյան, Ղազարյան,** *Հայկական...*, էջ 46:

Թորոս Տարոնացու նկարազարդած տիտղոսաթերթերում կիլիկյան ազդեցությունը արտահայտված է հարդարանքի մեջ: Ուղղանկյուն գլխազարդը կազմված է երկրաչափական, բուսակերպ, կենդանակերպ և թռչնակերպ մոտիվներից: Նրբագեղ ֆեստոններով ձևավորված բարավորում (լյունետ), կամ դրա ներքևում տեղ են գտել Ավետարանների վերնագրերը՝ գրված ավելի մանր գրով, որոնք, կիլիկյան օրինակներով, կատարված են ոսկով[38] կամ կարմիր թանաքով: Խորքը ոսկյա է: Ձախ կողմում էջի կիսով չափ ձգվող գլխատառը կազմված է Ավետարանչի խորհրդանիշով: Սկզբնատողը կատարված է մարդագիր, կենդանագիր, թռչնագիր, ծաղկագիր կամ հյուսածո, խճանկարային եղանակով: Ոսկյա խորքի վրա, էջի ամբողջ երկարությամբ՝ աջ կողմում ծաղկազարդ լուսանցազարդը վերևում ամփոփվում է խաչով: Գլխատառը, սկզբնատողը և լուսանցազարդը եզերված են ոսկով (նկ.5): Նկարչի հասուն շրջանի ձեռագրերում լուսանցազարդերում ներկայացված է նաև քառակերպի պատկերը:

Վերը նշված պատկերազարդման տարրերը տարածում են ստացել Կիլիկիայում XII դ.-ից ի վեր և Տարոնացու արվեստում արտահայտվել հենց կիլիկյան ձեռագրերի միջոցով[39]:

Թորոս Տարոնացու ստեղծագործություններում, ինչպես և կիլիկյան ձեռագրերում, տոնական շարքի պատկերները բաշխված են ըստ ավետարանների և ծածկում են էջի միայն մի կողմը: Նկարչի արվեստում սկզբնական շրջանի տոնական շարքի տեսարաններում կիլիկյան մանրանկարչական ազդեցությունը արտահայտված է ճարտարապետական և սակավ բնանկարային ֆոնի պատկերման է Մեծ Հայքի մանրանկարչական ավանդույթը, որը արտահայտված

---

38 «Ոսկի տառերը և տողերը ավետարանական բնագրում նշանակում են Տիրոջ «անսուտ և անապական» խոսքերը, որոնցով լուսավորվում են հավատացյալների միտքն ու հոգին»: **Վ. Ղազարյան,** Խորանների մեկնություններ, Երևան, 1995, էջ 16

39 **Казарян, Манукян,** *Армянская рукописная…*, с. 104; Մանուկյան, *Տեքստարաժանումները…*, 8, 9, 22, 23, 24; նույնի, «Le rôle de la rubrication…», 89, 91

և ոսկե խորքի օգտագործման մեջ[40]: Այդ շրջանում նկարչի տոնական շարքի տեսարաններում զգացվում է հիմնականում կոթողայնությամբ, լարված անցումներով և սակավ գունային պալիտրայով: Հասուն շրջանի գործերում զգացվում է կիլիկյան ազդեցությունը՝ գույների ընտրանին ավելի բազմազան է և վառ: Տարոնացու նկարազարդած ձեռագրերը հարուստ են «տեքստային»՝ բնագրի մեջ ներմուծված մանրանկարներով: Բնագրային մանրանկարների, ինչպես արդեն նշել ենք, առաջին օրինակները հայ արվեստում ներկայացված են X-XI դդ. Ավետարաններում: Բազում են դրանք և կիլիկյան գրքարվեստում: Թորոս Տարոնացին շարունակել է այդ ավանդույթը: Միաժամանակ, ըստ երևույթին, դրանք կապված են արևմտաեվրոպական Աստվածաշնչերի պատկերազարդման ավանդույթի հետ: Սակայն Տարոնացու արվեստում դրանք վերամշակված են ու ներկայացված բնագրի համապատասխան հատվածում, մինչդեռ լատինական ձեռագրերում նրանք տեղադրվում էին տեքստի՝ «յուրաքանչյուր շարադրանքի սկզբում»[41]: Բնագրային մանրանկարներով հարուստ է 1318 թ. Եսայի Նչեցու Աստվածաշունչը:

Թորոս Տարոնացու մանրանկարները հարուստ են զարդամոտիվներով, որոնց նկարիչը մեծ ուշադրություն է դարձնում: Կիլիկյանի նմուշների օրինակով՝ մանրանկարների խորքը ոսկյա է: Մենք նկատեցինք մի առանձնահատկություն, որն, ըստ մեզ, ոգեշնչված է կիլիկյան ձեռագրերից. որոշ տեսարաններում հրեշտակը պատկերված է մի թևը ուղղված դեպի վեր, մյուսը՝ վար. 1307 թ. Եսայի Նչեցու Ավետարանի «Ավետում» (էջ 153ա), «Խաչելություն» (էջ 143բ), «Յուղաբեր կանայք Քրիստոսի գերեզմանին» (էջ 145բ) տեսարանները, 1323 թ. Ավետարանի Մատթեոսի Ավետարանի

---

40 Հայտնի է, որ կիլիկյան ձեռագրերում բյուզանդական տարրը բնորոշիչ է: Ահա թե ինչպես է բնորոշում բյուզանդական արվեստի առանձնահատկությունները Վ. Լիխաչյովան. «Элементы пейзажа и архитектуры сведены к минимуму. От них вообще стараются отказаться, предпочитая подчеркивать особое значение сцены с помощью нейтрального золотого либо голубого фона», **В. Лихачева,** *Искусство Византии IV-XV веков*, Ленинград, 1986, с. 174.

41 **Զաքարյան, Դրամփյան, Հակոբյան, Կորխմազյան,** *Հայկական...,* էջ 45:

տիտղոսաթերթում ավետարանչի խորհրդանիշ՝ մարդ-հրեշտակը (էջ 12ա), «Յուղաբեր կանայք» (էջ 88ա), այլ տեսարաններ և ձեռագրեր (նկ. 6)։ Նույն առանձնահատկությանը հանդիպում ենք Թորոս Ռոսլինի արվեստում. 1256 թ. Ջեյթունի Ավետարանի «Ավետում» բնագրային մանրանկարում (էջ 197բ), 1267-1268 թթ. Մալաթիայի Ավետարանի Մատթեոսի Ավետարանի տիտղոսաթերթ (էջ 16ա) և այլուր։

Տարոնացու արվեստում հանդիպում ենք մարդակերպ պատմականացված գլխատառերի։ Այդ ավանդույթը ձևավորվել է Բյուզանդիայում XI դ., որը կիլիկյան վարպետները վերամշակել և այսուհետ նրանցում ներկայացրել են առաքյալներին, մարգարեներին, ավետարանիչներին[42]։ Տարոնացին շարունակել է կիլիկյան այս ավանդույթը նաև գլխատառերում։ Պատմականացված գլխատառերը բազում են 1318 թ. Եսայի Նչեցու Աստվածաշնչում և 1323 թ. Ավետարանում (տե՛ս նկ. 4)։

1318 թ. ընդօրինակված Եսայի Նչեցու Աստվածաշնչում ընթերցվածների սկիզբը շեշտված է ուղղանկյուն գլխազարդով, որն իր մեջ ամփոփում է բուսական և երկրաչափական մոտիվներ։ Այս հարդարանքի նախատիպին հանդիպում ենք կիլիկյան ձեռագրերում, հատկապես՝ Հովհաննես Արքաեղբոր դպրոցում ընդօրինակված նմուշներում և 1295 թ. Հեթում Բ-ի Աստվածաշնչում (ՄՄ Հմր 180)։ Ծանոթ լինելով Կիլիկիայում ընդօրինակված ձեռագրերին, Տարոնացին իր էջերում վերարտադրել է բազում տարրեր։

Եզրակացություն

Թորոս Տարոնացու ձեռագիր գրքերի պատկերազարդման վեր-լուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել ոչ միայն վարպետի գիտելիքների և հմտությունների մասին մանրանկարչական արվեստի ոլորտում, այլ նաև հասկանալ XIV դ. Գլաձորի դպրոցում և այդ ժամանակաշրջանի հայ արվեստում

[42] **Manoukian,** «Le rôle de la rubrication…», p. 133; **նույնի,** *Տեքստաբաժանումները…* ,էջ 25:

տարածված որոշակի առանձնահատկությունները: Նկարիչը, օգտագործելով տարբեր դպրոցների պատկերազարդման ավանդույթները, կարողացել է ստեղծել իր սեփական հարուստ, եզակի աշխարհը: Թորոսի ոճը թերևս արևելյան է: Այստեղ հիմնականում արտահայտված են Մեծ Հայքի տարբեր դպրոցների ոճական ավանդույթները: Մեծ Հայքի դպրոցների ազդեցությունը արտահայտված է Տերունական պատկերներում, ֆիգուրների հանդիսավորության և կոթողայնության, բնապատկերի, ճարտարապետական խորքի, գունապնակի, ինչպես նաև արևելյան դեմքերի մշակման մեջ:

Սակայն, պատկերազարդման համակարգի առումով, ինչպես մենք փորձեցինք ցույց տալ հոդվածում, Թորոս Տարոնացու ծաղկած ձեռագրերում խորանների, տիտղոսաթերթերի և լուսանցազարդերի հարդարանքը պարունակում է բազում կիլիկյան տարրեր:

THE CILICIAN MINIATURE TRADITION IN THE CANON TABLES DESIGNED BY TOROS TARONATSI

NAIRA NAZARYAN
Applicant of Institute of Arts NAS of RA

ABSTRACT

Armenia and Cilicia were in long close cultural relations. Many prominent figures from Armenia have been educated in Cilicia, and many artists from Cilicia maintained contact with their historical homeland. That is why we find common elements in the manuscripts created in the scriptoria of these schools. The influence of the Cilician school is felt in the Concordance Canons, Title pages, Lord's cycle, marginals and other artistic ornaments.

On the Title pages, in the left corner of the page, there is a capital letter with the symbol of the Evangelist. In the right corner of the page is a marginal ending with a cross. This type of decor is already found in manuscripts from the XIIth century. Evangelists are depicted before the corresponding Gospel. Many of these elements

have "left" the Original Armenia and returned in an improved form.

Toros Taronatsi was inspired by Precilician and Cilician manuscripts to illustrate his pages. The works by Toros abound with ornaments, Lord's cycle and text miniatures.Using the artistic experience of different miniature schools, the master was able to create his own rich, unique world.

Key words: *Cilicia, title page, marginal, Lord's cycle, evangelist, Toros Taronatsi.*

ТРАДИЦИЯ КИЛИКИЙСКОЙ МИНИАТЮРЫ И КАНОНЫ СОГЛАСИЯ ИЗОБРАЖЕННЫЕ ТОРОСОМ ТАРОНАЦИ

НАИРА НАЗАРЯН
Аспирант института искусств НАН РА

РЕЗЮМЕ

Армения и Киликия были в продолжительных тесных культурных связях. Многие выдающиеся деятели из Армении получили образование в Киликии, и многие деятели искусства из Киликии поддерживали связь с исторической родиной. По этой причине в рукописях, созданных в скрипториях этих школ, находим общие элементы. Влияние киликийской школы ощущается в хоранах (канонах согласия), в титульных листах, Праздничном цикле, маргиналиях, в других художественных формах. На титульных листах в левом углу страницы вписана заглавная буква с символом евангелиста. В правом углу страницы-маргиналия, завершающаяся крестом. Такого типа декор встречаем уже в рукописях с XII века. Евангелисты изображены перед соответствующим Евангелием. Рукописи изобилуют текстовыми миниатюрами. Многие из этих элементов «покинули» Коренную Армению и, в усовершенствованном виде, вернулись обратно.

Торос Таронаци вдохновлялся докиликийскими и киликийскими образцами для иллюстрирования своих рукописей. Работы Тороса изобилуют орнаментами, миниатюрами Праздничного цикла и текстовыми миниатюрами. Используя художественный опыт разных школ миниатюры, мастер смог создать свой богатый, уникальный мир.

Ключевые слова: *Киликия, титульный лист, маргиналия, Праздничный цикл, евангелист, Торос Таронаци.*

1



2



3

Նկ. 1. Թորոս Ռոսլին, Զեյթունի Ավետարան, 1256 թ., Եվսեբիոսի թուղթ, էջ 3բ
Նկ. 2. Թորոս Ռոսլին, Զեյթունի Ավետարան, 1256 թ., Ընծայական, էջ 5բ
Նկ. 3. Սեբաստիայի Ավետարան, 1066 թ., XII դ., Մարկոսի Ավետարանի տիտղոսաթերթ, էջ 83 ա

4



5

6

Նկ. 4. Թորոս Տարոնացի, 1318 թ. Եսայի Նչեցու Աստվածաշունչ, Առակների Գրքի սկիզբ, էջ 286ա
Նկ. 5. 1307-1331 թթ. Ավետարան, Ղուկասի Ավետարանի տիտղոսաթերթ, էջ 153ա
Նկ. 6. Թորոս Տարոնացի, 1307 թ. Եսայի Նչեցու Ավետարան, Ավետում, էջ 153ա